ՀՀ ք. Երևան, 0015, Արգիշտի փող., 7/4 շ., բն. 35
Հեռ.՝ (+374 93) 999 390, (+374 55) 099 013
Էլ. փոստ՝ menqproduction@gmail.com
menqproduction.com

SINCE 2005

«Հաստատում եմ», մրցաշարի կազմակերպիչ՝
«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ընկերության հիմնադիր և
տնօրեն Պավել Սարգսյան_____կ.տ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բիզնես ոլորտի, բարձր տեխնոլոգիական, հեռահաղորդակցության, ֆինանսաբանկային ընկերությունների միջև արագ շախմատի՝թիմային և անհատական XXIII-րդ սիրողական առաջնություն

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն Կանոնադրությամբ սահմանվում են բիզնես ոլորտի, ՀՀ ԿԲ, առևտրային բանկերի, վարկային, ապահովագրական, ներդրումային, աուդիտորական, բարձր տեխնոլոգիական, հեռահաղորդակցության ընկերությունների միջև արագ շախմատի սիրողական առաջնության անցկացման կանոնները և պայմանները:

1.2 Սույն Կանոնադրությունը և դրա փոփոխությունները հաստատվում են առաջնության կազմկոմիտեի (այսուհետև՝ Կազմկոմիտե) որոշումով՝ քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

1.3 Կազմկոմիտեի կազմում ընդգրկվում են՝ մրցաշարի կազմակերպիչը, թիմերի ղեկավարները և մրցաշարի Գլխավոր մրցավարը: Կազմկոմիտեի նախագահողն է մրցաշարի կազմակերպիչը:

1.4 Կազմկոմիտեն իրավասու է քննարկել և որոշում ընդունել մրցաշարի հետ կապված կազմակերպչական և խաղային հարցերի վերաբերյալ: Կազմկոմիտեի որոշումները ընդունվում են մասնակիցների քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Այն դեպքում, եթե ձայները կիսվում են հավասար, որոշիչ ձայն ունի Կազմկոմիտեի նախագահողը:

2. Առաջնության մասնակիցները

2.1. ՀՀ ֆինանսաբանկային և բիզնես ոլորտի ընկերությունների միջև արագ շախմատի սիրողական առաջնությանը մասնակցում են բացառապես ՀՀ ԿԲ, առևտրային բանկերի, վարկային, ապահովագրական, ներդրումային, աուդիտորական և բիզնես ոլորտի ընկերությունների ներկայացուցիչները:

2.2. Մրցաշարին կարող են մասնակցել առանց տարիքային սահմանափակման, թե արական, թե իգական սեռի ներկայացուցիչներ:

2.3. Առաջնությանը կարող են մասնակցել բացառապես բիզնես ոլորտի, ՀՀ ԿԲ, առևտրային բանկերի, վարկային, ապահովագրական, ներդրումային, աուդիտորական, բարձր տեխնոլոգիական, հեռահաղորդակցության ընկերությունների (այսուհետև՝ **ընկերություններ**)՝ մինչև **19.02.2023թ.** աշխատանքի ընդունված հաստիքային աշխատակիցները: Տվյալ պայմանները հաստատվում են ընկերության կողմից ներկայացված «Մասնակցության հայտի» և մասնակիցների աշխատանքային գրքույկների, աշխատանքի ընդունելու հրամանի և անձնագրի պատճեների հիման վրա: «Մասնակցության հայտ»-երը ներկայացվում են մրցաշարի կազմկոմիտե ոչ ուշ քան մրցաշարի մեկնարկային օրվանից **2 օր առաջ/ այսինքն՝ 17.02.2023թ. ներառյալ/**: Ներկայացված հայտերի ճշտությունը ստուգվում է նաեւ մասնակիցների կողմից: Առաջնությանը չեն կարող մասնակցել պրոֆեսիոնալ խաղացողներ, որոնք վերջին մեկ ու կես տարվա ընթացքում մասնակցել են որևիցե պրոֆեսիոնալ մրցաշարի:

2.4. Այն դեպքում, եթե մրցաշարի որևէ խաղի ընթացքում խախտվել են 2.3 կետի պահանջները որևէ մասնակցի կողմից՝ խաղերին մասնակցել է չհայտավորված կամ պահանջներին

չբավարարող խաղացող, ապա տվյալ թիմին գրանցվում է պարտություն 0:1 հաշվով և հեռացվում է մրցաշարից:

2.5. **Մրցաշարին կարող է մասնակցել յուրաքանչյուր կազմակերպությունից 4 թիմ՝ յուրաքանչյուր թիմում երեքական մասնակցով: Մրցաշարի ընթացքում արգելվում է մասնակից թիմերում փոփոխություն:**

2.6. Մասնակիցները չեն կարող մասնակցել առաջնությանը սպորտային հագուստով:

2.7. Մրցաշարի բոլոր մասնակիցները պետք է պահպանեն պարետատան կողմից մշակված և ցուցված հակահամաճարակային կանոնները:

3. Խախտումներ, բողոքարկումներ, տուգանքներ

3.1 Խաղերի հետ կապված թիմերի բողոքները քննարկվում են մրցաշարի Կազմկոմիտեի նախագահի և խաղերի գլխավոր մրցավարի կողմից՝ անմիջապես խաղի ընթացքում և կայացված որոշումները բողոքարկման ենթակա չեն:

3.2 Խաղասրահում ոչ սպորտային արարքների դեպքում խաղացողը և թիմը անմիջապես հեռացվում է խաղասրահից և այլևս չի մասնակցում մրցաշարին: Ոչ սպորտային արարքի որակավորումը տրվում է Կազմկոմիտեի նախագահի և մրցավարների կողմից:

3.3 Մասնակիցների, թիմի կամ վերջիններիս երկրպագուների կողմից խաղը ընդհատելու և խաղասրահում վեճ, աղմուկ բարձրացնելու դեպքում տվյալ մասնակիցը և թիմը հեռացվում է մրցաշարից:

4. «Արագ շախմատ» խաղի ընդհանուր դրույթներ, կանոններ

Մրցաշարն անցկացվում է շրջանային մրցակարգով, ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոնների, մրցաշարային կանոնների համաձայն: Ժամակարգը՝ 10 րոպե + 5-ական վայրկյան յուրաքանչյուր մրցակցին:

4.1. Անհնարին քայլը համարվում է կատարված, երբ գործի է դրվում հակառակորդի ժամացույցը: Այն բանից հետո, մինչ պատասխան քայլ կատարելը, հակառակորդը կարող է պահանջ ներկայացնել անհնարին քայլի առնչությամբ: Խաղացողի կողմից առաջին անհնարին քայլ կատարելու համար մրցավարը պետք է հակառակորդին ավելացնի 2 րոպե, սակայն նույն խաղացողի կողմից երկրորդ անհնարին քայլի դեպքում պարտիան համարվում է այդ խաղացողի կողմից պարտված:

4.2. Դրոշակը համարվում է ընկած, եթե այդ մասին խաղացողի կողմից ճիշտ հայտարարություն է արվել: Ժամանակը սպառվելու պատճառով հաղթանակ պահանջելու համար խաղացողը պետք է կանգնեցնի ժամացույցը և տեղեկացնի մրցավարին: Պահանջը բավարարելու համար անհրաժեշտ է, որ ժամացույցը կանգնեցնելուց հետո պահանջողի դրոշակը ի տարբերություն հակառակորդի դրոշակի ընկած չլինի:

4.3. Քայլ կատարողը կարող է ուղղել մեկ կամ մի քանի խաղաքարի դասավորություն նախապես հայտարարելով դրա մասին:

4.4. Յուրաքանչյուր քայլ պետք է կատարվի միայն մեկ ձեռքով:

4.5. Առանց մրցավարի թույլտվության՝ խաղացողներին արգելվում է խաղավայրում ունենալ բջջային հեռախոս կամ հեռահաղորդակցության այլ էլեկտրոնային միջոց, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ամբողջովին անջատված վիճակում են: Երբ խաղացողներից որևէ մեկի մոտ վերը նշված իրերից ինչ-որ ձայն է լսվում տվյալ խաղացողին գրանցվում է պարտություն:

4.6. Ծխելը թույլատրվում է շենքից դուրս հատկացված հատվածում:

4.7. Հանդիսատեսները և մյուս խաղացողները չպետք է խոսեն պարտիայի մասին կամ այլ կերպ միջամտեն խաղին: Անհրաժեշտության դեպքում մրցավարը կարող է խախտողներին հեռացնել խաղավայրից:

4.8. Մրցաշարում տեղերը որոշվում են ըստ՝

Թիմային միավորների /թիմի հաղթանակ – 2 միավոր, ոչ-ոքի – 1 միավոր, պարտություն – 0 միավոր/:

Հավասարության դեպքում հաշվի են առնվում.

ա/ թիմի մասնակիցների հավաքած միավորների հանրագումարը,

բ/ թիմի անձնական հանդիպումներ,

գ/ առաջին տախտակի վրա վաստակած միավորները. եթե հավասարությունը պահպանվում է, ապա հաշվի են առնվում երկրորդ, այնուհետև երրորդ և հաջորդող տախտակների վրա վաստակած միավորները:

5. Մրցաշարի խաղերը, «Արագ շախմատ»

5.1. Մրցաշարը Կազմկոմիտեի որոշմամբ սկսվում է մասնակիցների առաջին հանդիպմամբ, որի ժամանակ վիճակահանությամբ որոշվում են մասնակից թիմերի մրցակիցները:
5.2. Եթե Մրցավարը խախտում է արձանագրել և տուգանք նշանակել, մասնակիցն իրավունք չունի վեճի մեջ մտնելու մրցավարի հետ, սակայն խաղի ընթացքում, սույն կանոնադրության համաձայն, կարող է բողոքարկել խաղի արդյունքները, կազմկոմիտեի նախագահին և գլխավոր մրցավարին: Բողոքարկման ընթացքը չի կարող տևել ավելի քան 2 րոպե:
5.3. Մասնակիցն իրավունք չունի
5.3.1. Խաղերի ընթացքում ծխել սեղանի մոտ,
5.3.2. Խաղերի ընթացքում օգտագործել ալկոհոլ,
5.3.3. Խաղերի ընթացքում զրուցել հանդիսատեսի հետ,
5.3.4. Խաղերի ընթացքում վիճել մրցավարի կամ մրցակցի հետ,
5.3.5 Խաղերի ընթացքում արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից:
5.4. Յուրաքանչյուր խաղի պարտիայի ավարտից հետո տրվում է 1-5 րոպե հանգստի ժամանակ:

6. Կազմակերպչական դրույթներ

6.1. Մրցաշարին մասնակցելու նպատակով յուրաքանչյուր կազմակերպություն մրցաշարի կազմակերպչին յուրաքանչյուր մասնակից թիմի համար վճարում է **75,000** (Յոթանասունհինգ հազար ՀՀ դրամ ներառյալ հարկերը), մեկ կազմակերպությունից **երկու թիմի մասնակցության դեպքում վճարը կազմում է 95,000 (հնսունհինգ հազար ՀՀ դրամ ներառյալ հարկերը), երեք թիմի դեպքում՝ 115,000 (մեկ հարյուր տասնհինգ հազար ՀՀ դրամ ներառյալ հարկերը), չորս թիմի դեպքում՝ 135,000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար ՀՀ դրամ ներառյալ հարկերը): Մեկ ընկերությունից** առավելագույն կարող են մասնակցել 4 թիմ: Վճարումները իրականացվում են կանխավճարի տեսքով, այնուհետև մրցաշարի ավարտին ծառայությունը մատուցելուց հետո կազմակերպիչը դուրս է գրում հաշվարկային հաշիվ: Վճարումները կատարվում են փոխանցման տեսքով՝ մրցաշարի մեկնարկման օրվանից **2 օր** առաջ (**11.10.2022թ.** տվյալները ներկայացված են ստորև): Ժամանակին չվճարած մասնակիցը չի մասնակցում մրցաշարին: Տվյալ վճարները չեն վերադարձվում մասնակցին, եթե խախտվել է 2.3 կետը, վերջինս ներկայացրել է մասնակցության հայտ, վճարել է գումարը, սակայն չի ներկայացել մրցաշարին ոչ կազմակերպչի մեղքով, իսկ մրցաշարը մեկնարկել է:
6.2. Յուրաքանչյուր մասնակցի մրցաշարի կազմակերպչին վճարված մասնակցության վճարի **35-70%** (ըստ մասնակիցների քանակի) գումարը բաշխվում է մրցաշարի մրցանակային տեղերը զբաղեցրած մասնակիցների միջև:
6.3. Մրցաշարի կազմակերպիչը վերը նշված գումարի **30-65%** (ըստ կազմակերպությունների քանակի) պարտավորվում է ապահովել մրցաշարի կազմակերպչական կոորդինացումը, խաղասրահը, մրցավարներին, մրցաշարի լուսաբանումը ՁԼՄ-ներում, մրցաշարի փակման մրցանակաբաշխությունը:

Մրցաշարի կազմակերպիչ, ծառայությունը մատուցող՝
«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ընկերություն

Կազմակերպության իրավ. անունը	**«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**
Իրավաբանական հասցե	**ք.Երևան, Արգիշտի փ., 7/4 շ., բն. 35**
Հաշվարկային հաշիվ ՀՀ դրամ	**1570021819130100**
Բանկ	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
ՀՎՀՀ	**02634794**
Տնօրեն	**Պավել Սարգսյան**